

## Մկրտիչ Արմեն

### Անձրևի դուստրը

1

Այդ տարի արձակուրդս վերցնելով, ես մեկնեցի ընկերոջս մոտ հյուր: Մի տարուց ավելի էր, ինչ նա տեղափոխվել էր մեր մոտից, շատ շուտով ամուսնացել էր և աշխատում էր ինչ-որ հիմնարկում: Նա իր նամակներում շատ էր գովում իրենց թեև փոքրիկ, բայց, ինչպես ինքն էր գրում, «հանգստավետ» քաղաքը, որտեղ ես կարող էի հիանալի անցկացնել իմ արձակուրդը՝ «առանց զղջալու»:

Նստելով գնացք, ես երկու օր հետո, առավոտյան, հայտնվեցի նրանց քաղաքում: Հարմարեցրել էի այնպես, որ հասնեմ կիրակի՝ ամուսինների ազատ օրը: Նրանք երկուսն էլ աշխատում էին:

Օրը թուխպ էր և բավական անհրապույր: Կայարանում նրանք դիմավորեցին ինձ, ծաղկեփունջ սվիրեցին, և ընկերս ինձ ծանոթացրեց իր կնոջ հետ:

Երբ մենք կառամատույցից դուրս ելանք կայարանամերձ փոքրիկ հրապարակը, հիասթափությունը պաշարեց ինձ: Սովորական փոքրիկ քաղաք էր՝ անհրապույր, անհետաքրքիր: Միհարկանի և երկհարկանի շենքեր՝ անշուշտ դեռ հեղափոխությունից առաջ կառուցված երկու ցուցափեղկանոց խանութ՝ մեծագույն «Ունիվերմագ» անուկով. լրագրի վաճառքի կիոսկ, որի գունաթափված տախտակները հարկավոր էր ներկել դեռ նախանցյալ տարի, առանձնակի կանգնած՝ խիստ ծանր տեսք ունեցող եկեղեցի՝ դռները փակ, իսկ պատերի վրա՝ զանազան հայտարարություններ փակցրած. մասնավոր վարսավիրանոց՝ կապույտ ներկած տախտակե բուդկայի մեջ, սկուտեղի ձև ունեցող ցուցանակով և ապակու ետևում մի գանգրահեր աղջկա մատիտանկարով: Իսկական պրովինցիա...

Ես իսկույն զղջացի գալուս համար, ետ շրջվեցի, կարոտով նայեցի այն գնացքին, որը բերել էր ինձ: Բայց այդ թուխպին ընկերոջս կինը թեև անցուկ արեց ինձ և հրավիրեց նստել ավտոբուս: Մենք մոտեցանք կանգառին, բայց հրավերն իրագործել հնարավոր եղավ միայն տասը թուխպ հետո, երբ վերջապես հայտնվեց ավտոբուսը՝ լիք-լցված: Մենք նստեցինք, ավելի շուտ կանգնեցինք այնտեղ և մի քանի թուխպից հասանք: Բայց մենք հասանք ոչ թե ընկերոջս տունը, այլ այն կետը, որտեղից պետք է ոտքով շարունակեինք ճանապարհը:

Ընկերս վերցրեց իմ փոքրիկ ճամպուրակը, իսկ նրա կինը, դարձյալ թեև անցուկ անելով ինձ, սկսեց ծանոթացնել իրենց քաղաքի հետ: Մենք քայլում էինք, ըստ երևույթին, կենտրոնական փողոցներից մեկով, որի վրա համարյա բոլոր շենքերը երկհարկանի էին:

— Սա Ռայխշտն է,— հերթով ցույց էր տալիս նա,— սա մանկապարտեզ է, սա՝ Ռիխմիխատրոյի բաժանմունքն է, սա կենցաղային սպասարկման սալոն է, սա՝ հագուստի վերանորոգման ատելյե...

Ընկերս, իր հերթին ցույց տալով երկհարկանի աղյուսե մի շենք, ծեփը մի քանի տեղով պոկված, բացատրեց.

— Սա աշխատանքի պալատն է:

Քիչ հետո նա ցույց տվեց մի ուրիշ «պալատ», այս անգամ միհարկանի և փայտաշեն՝ պիոներների պալատը:

Ուշադրություն դարձնելով, որ մենք բավական ժամանակ է, ինչ քայլում ենք, բայց դեռ չենք հանդիպել ոչ մի պուրակի, ես հարցրի.

— Իսկ որտե՞ղ է ձեր հանգստի և կուլտուրայի պարկը:

— Մի՞թե չնկատեցիք,— ներողամիտ ժպտաց ընկերոջս կինը,— մենք անցանք դրա մոտով...

Ոչ, ես չեի նկատել:

— Սա հիվանդանոցն է,— շարունակեց նա ցույց տալով սպիտակ պատերով մի շենք:—  
Հավանո՞ւմ եք:

Չվշտացնելու համար նրան, ես ասացի, որ շատ եմ հավանում և նույնիսկ ցանկություն հայտնեցի  
երբևէ ծանոթանալ դրա ներքին սարքուկարգի հետ: Ավաղ, ես այդ բոլորին չգիտեի, որ շատ  
շուտով հնարավորություն եմ ունենալու իրագործել իմ ցանկությունը լիովին չափով...

Փողոցն արդեն վերջանում էր և, ըստ երևույթին, վերջանում էր ամբողջ քաղաքը: Որտե՞ղ է  
ապրում վերջապես իմ ընկերը: Մենք արդեն անցնում էինք վերջին տնակների մոտով, իսկ նա ոչ  
կանգ էր առնում և ոչ էլ շուռ գալով դեպի մեզ, հայտնում, որ «քիչ մնաց»:

Եվ հանկարծ... Բայց արդյո՞ք հանկարծ. . . Արդյո՞ք նույն բանը չի կարելի տեսնել մեր երկրի  
յուրաքանչյուր փոքրիկ քաղաքում...

Հենց որ փողոցը վերջացավ, ես տեսա իմ դիմաց, մի քիչ դեպի ձախ, մի բավական մեծ դատարկ  
տարածությունից այն կողմ, չորս և հինգհարկանի հսկայական կորպուսների մի մեծ խումբ:

— Ի՞նչ է սա...,— զարմացած և հիացած հարցրի ես:

— Հենց սա է Ռիսմիխը,— իմ անտեղյակության վրա ներողամտորեն ժպտալով, ասաց ընկերոջս  
կինը:

— Դու ե՞րբ պիտի սովորես ճիշտ արտասանել այդ բառը,— նկատողություն արեց նրան ընկերս,  
ապա դիմեց ինձ.— սա հենց Ռիսմիսյունն է: Ե՛վ գործարաններն են այնտեղ, և՛ բնակելի  
շենքերը: Քիչ մնաց...

Այո, շատ քիչ էր մնացել, բայց որքան շատ էր այդ քիչը. . . Թեև ընկերս համոզում էր ինձ, որ այն  
ցեխը, որով մենք քայլում էինք, ճանապարհ էր, բայց իմ կարծիքով դա սովորական ցեխ էր՝ ըստ իր  
որակի, և անսովոր՝ ըստ իր քանակի: Այժմ ես էի թևանցուկ արել ընկերոջս կնոջը և զգուշանում  
էի, որ նա չխորասուզվեր:

Բայց վերջապես ավարտվեց այդ ճանապարհը,— հազիվ հինգ հարյուր մետր,— և մենք դուրս  
ելանք հիանալի ասֆալտի վրա: Պարզվեց, որ շենքերի խումբը շատ ավելի մեծ էր, քան երևում էր  
հեռվից: Ձգված էին այդտեղ իրար հատող փողոցներ, կանգնած էր մի ամբողջ բանվորական  
ավան:

— Իսկ ինչո՞ւ ձեր ավանը քաղաքի ծայրին է կառուցված և ոչ թե բուն քաղաքում,— հարցրի ես՝  
ցեխոտ ոտքերս թմիթմիացնելով ասֆալտի վրա:— Ե՛վ քաղաքը կգարգանար, և՛...

— Դա ընդունված չէ,— ներողամիտ ժպտաց ընկերս:— Ուրիշ շատ քաղաքներում էլ այսպես է:

— Գոնե ճանապարհն ասֆալտեին...

— Այ, այդ հարցում իրավացի ես: Եվ կասֆալտեն: Ես համոզված եմ: Ճիշտ է, դեռ վեճ է գնում այն  
մասին, թե ով պիտի անի դա՝ քաղսովե՞տը, թե Ռիսմիսյունը, բայց ես համոզված եմ...

— Արդեն մի տարի է, որ համոզված ես, միամիտ,— հանդիմանեց կինը:— Դա կանի ոչ թե  
Ռիսմիսյունը, այլ քաղաքը: Եվ ոչ թե կասֆալտի, այլ կիսճապատի:

— Թեկուզև, թեկուզև,— հառաչեց ընկերս:

Մենք արդեն թեքվել էինք մի այլ փողոց: Պրովինցիան այլևս չէր երևում: Իմ շուրջն ամենուր  
բազմահարկ շենքեր էին, և ես ինձ զգում էի մի մեծ քաղաքում:

— Սա գլխավոր փողոցն է և ահա սա էլ մեր տունը,— ցույց տվեց ընկերս՝ երբ մենք մի անգամ ևս  
թեքվեցինք անկյունից:

Փողոցը շքեղ էր՝ լայն, փառահեղ: Անցնում-դառնում էին ավտոմեքենաներ, շրջում էին շատ  
մարդիկ՝ համարյա բոլորը հովանոցներով, որովհետև յուրաքանչյուր բույս կարող էր անձրև գալ:

Ամեն ինչ կարծես սովորական էր փողոցում, բայց ինչ-որ անսովոր, խորթ բան կար այնտեղ: Մի քանի րոպե ես դեռ չէի հասկանում, թե ինչն էր դա, ապա գլխի ընկա:

— Ինչո՞ւ ծառեր չկան փողոցում,— հարցրի ես:— Եվ ինչո՞ւ չկա ոչ մի խանութ:

— Ծառեր կտնկեն, ես համոզված եմ,— ասաց ընկերս՝ անուղղելի լավատեսությամբ, — իսկ խանութներ քաղաքում շատ կան: Մենք այնտեղից ենք գնումներ կատարում:

— Մի՞թե դա հարմար է,— բողոքեցի ես:

— Խանութների փոխարեն ամեն մի շենքում մի քանի բնակարան ավելի են կառուցել,— հիշեցրեց ընկերս:— Բնակարանային նեղվածության այս պայմաններում, կարելի է ասել...

Կինը բարկացած նայեց ամուսնուն:

— Իսկ որտե՞ղ է ձեր հանգստի և կուլտուրայի պարկը,— հարցրի ես:

— Մենք արդեն անցանք,— զարմացած նայելով ինձ, հիշեցրեց կինը,— Ռայխռոյից դեպի աջ: Ես ձեզ դեռ այնտեղ ասացի:

Լիֆտով բարձրանալով հինգերորդ հարկ, մենք մտանք ընկերոջս կոկիկ և լավ կահավորված բնակարանը:

— Չգա քեզ ինչպես քո տանը,— ասաց նա ինձ:

## 2

Հետևյալ օրը, երբ ես արթնացա ամուսիններն արդեն գնացել էին աշխատանքի: Սեղանի վրա ինձ համար դրված էին նախաճաշ, թեյի պարագաներ և մի տոմսակ՝ գանազան ցուցմունքներով: Տոմսակը պարունակում էր խիստ արժեքավոր տեղեկություններ այն մասին, թե բուֆետի որ անկյունումն է քացախը՝ եթե ուզենամ գործածել, քաղաքի որ մասումն է հանգստի և կուլտուրայի պարկը՝ եթե ուզենամ զբոսնել: Նշված էր այն տեղը, որտեղ պետք է դնել բանալին՝ դուռը փակելուց հետո և այլն:

Նախաճաշից հետո ես դուրս ելա ծանոթանալու իմ շրջապատին: Բավական ցուրտ օր էր: Երկինքը դեռ երեկվանից թխպոտ էր և նման էր մի մարդու, որը երկար ու ձիգ պատրաստվում է ինչ-որ բան ասելու, բայց դեռ չի ասում:

Ավանի փողոցները դատարկ էին: Մարդկանց մի մասը գործարաններում ու գրասենյակներում աշխատում էր, իսկ մյուս մասը, ըստ երևույթին, մեկնել էր քաղաք՝ գնումներ կատարելու կամ զբոսնելու: Գնացել էին, իհարկե, հետիոտն: Ավտոբուսներ չէին երթնեկում քաղաքի և ավանի միջև՝ ճանապարհ չլինելու պատճառով:

Մի քանի րոպե հետո ես արդեն ձանձրացա ավանից և տխրեցի: Կանգնած էին հիանալի շենքեր, աշխատանքի իսկական պալատ, պիոներների իսկական պալատ և այլն, որոնք կարող էին պատիվ բերել յուրաքանչյուր մայրաքաղաքի, բայց դրանց ընդհանուր գումարը չէր գոյացնում նորմալ փողոցներ և նորմալ ավան: Ոչ մի խանութ, ոչ մի զբոսավայր, ոչ մի կինո կամ թատրոն, ոչ մի հրապարակ կամ թեկուզ ծառ չէին կենդանացնում և զվարթացնում քանոնով զծված լայն փողոցների լրջաբարո տեսքը:

Բնականաբար ես իմ հայացքն ուղղեցի դեպի պրովինցիալ քաղաքը և քայլերս ուղղեցի դեպի այնտեղ: Հասնելով ասֆալտի եզրին, ես մի պահ կանգ առա վարանած՝ ինչպես լողալ չիմացող մարդը՝ ծովի ափին: Իմ դեմ փռված էր ցեխաստանը...

Ոչ մի նորմալ անձնավորություն, իհարկե, կամավորաբար ոտք չէր դնի այնտեղ: Բայց ցեխաստանի այն կողմում կանգնել և դեպի իրեն էր դիմել քաղաքը՝ ճիշտ է, պրովինցիալ, փոքրիկ, բայց կենդանի, նորմալ, բնական: Եվ ես, հաղթահարելով իմ մեջ ինքնապաշտպանության բնագոյը, ինձ նետեցի ցեխի գիրկը...

Խճապատ փողոցը, որտեղ ես դուրս եկա կես ժամ հետո, ինձ թվաց շքեղ գորգերով ծածկված: Թմփթմփացնելով ոտքերս և ազատվելով մի քանի կիլո կշռող ցեխի զգալի մասից, ես ետ դարձա, նայեցի իմ նվաճած տարածությանը, թախծալի հայացք նետեցի այդ տարածության այն կողմում գտնվող հիանալի ասֆալտին շենքերին և իսկույն շուռ գալով, խորացա պրովինցիալ քաղաքի փողոցների մեջ:

Որպես երիտասարդ և դեռ չսիրահարված, ես նախ և առաջ ուշադրություն դարձրի, թե ինչպիսի՞ աղջիկներ կան այդ քաղաքում: Բայց աղջիկները սովորական էին, և ես շուտով ուշադրություն դարձրի, որ դադարել եմ նրանց վրա ուշադրություն դարձնելուց:

Հանեցի ամուսինների գրած տոմսակը, սկսեցի ուսումնասիրել.— «կոշիկի խոզանակը թարեքի վրա է, գավառագիտական թանգարանը՝ Կոռպերացիայի փողոցում. եթե թեյը սառել է՝ տաքացրեք պրիմուսի վրա. «Տիտան» կինոն կայարանի մոտ է, իսկ «Օվկիանոսը» փակ է՝ վերանորոգման պատճառով...»:

Երկու-երեք ժամ հետո ես սպառեցի քաղաքի բոլոր տեսարժան վայրերը: Գավառագիտական թանգարանում հետաքրքրությամբ տեսա, թե ինչպիսի ժանիքներ են ունեցել այդ քաղաքի բնակիչների նախահայրերը, «Տիտան» կինոյում դիտեցի ինչ-որ լավ ֆիլմի կցկտուր մնացորդները, մի կիոսքի մոտ պիրաշկի կերա, մյուսի մոտ՝ զազաջուր խմեցի, մի բուրդկայում մաքուր ածիվեցի՝ այտին վրա ստանալով ածելու երկու փոքրիկ, ոչ մահացու հարվածներ:

Հանգստի և կուլտուրայի պարկը, որպես ամենահաճելի վայր, ես թողել էի վերջին հերթին: Նորից հանեցի տոմսակը, նայեցի. «Եփած ջուրը գրաֆինի մեջ է, իսկ հանգստի և կուլտուրայի պարկը՝ Ըմբիշների փողոցի վրա: Մյուս մուտքը՝ գազանանոցի կողմից»:

Գազանանոցը, որը շրջիկ էր, արդեն մեկնել էր քաղաքից, իսկ պարկի մուտքն այդ կողմից փակ էր: Ես դուրս եկա Ըմբիշների փողոցը և մոտեցա տոմսարկղին: Տոմսավաճառուհին, որ ձեռագործով էր զբաղված, իսկույն վերցրեց բանալին, բաց արեց սեղանի արկղը, հանեց այնտեղից տոմսերի տետրը, պոկեց առաջին տոմսը և սիրալիր հայացքով տվեց ինձ: Ապա, դեմքը խոժոռելով և ստանալով արմինխտրատորի տեսք, նորից վերցրեց տոմսն ինձնից, պատռեց և ասաց.

— Մտեք:

Տոմսարկղի կողքի փոքրիկ դռնակով ես մտա պարկ: Մտա և կանգ առա հիացած... Այո... Ես իրավունք ունեի այդ զբոսավայրը թողնելու վերջին հերթին՝ որպես ամենահետաքրքիր վայր...

Ես մտել էի ոչ թե պարկ, այլ ջուռգլի: Եթե ամպամած երկնքի փոխարեն իմ գլխավերևում շողար ջեռ արևը, ինձ պիտի թվար, թե ես գտնվում եմ Աֆրիկայում: Ամեն թույլ թվում էր, թե ուր որ է մացառների միջից դուրս են ցատկելու մերկ մարդիկ՝ թունավոր նետերն ու աղեղները ձեռքերին...

Ես քայլեցի ծառուղիներից մեկով՝ զգույշ հայացք նետելով չորս կողմս: Քիչ հետո ծառուղին կորավ իրար խճճված ճյուղերի մեջ, և ես սկսեցի դժվարությամբ հարթել իմ ճանապարհը դեպի առաջ: Ես ափսոսացի, որ տոմսակի մեջ իմ տանտերերը մոռացել էին նշել, թե որտեղ էր դրված կացինը: Որքան պետք կգար դա ինձ այստեղ...

Բավական ժամանակ էր, ինչ ես դեգերում էի հանգստի և կուլտուրայի ջուռգլիում, բայց ինձ դեռ չէր հանդիպել ոչ մի կենդանի արարած: Ես սկսեցի վախենալ: Ինձ թվաց, թե սուտ էր ասել գազանանոցի վարչությունն իր հայտարարության մեջ.— գազանանոցը ոչ թե հեռացել էր քաղաքից, այլ թաքնվել էր այդ պարկում: Ես սպասում էի, թե ահա, ուր որ է՝ ծառերի ետևից ինձ վրա կհարձակվի ջուռգլիների արքա առյուծը կամ փոխարքա վագրը:

Եվ հանկարծ, մացառները տանելով աջ և ձախ, ես կանգ առա սարսափից կարկամած: Իմ դիմաց ես տեսա ավելի անակնկալ բան, քան առյուծն ու վագրը: Ես տեսա ամառային կինոթատրոն... Ես ցնցվեցի, հավաքեցի ինձ, վերադարձա իրականությանը, հիշեցի, որ գտնվում եմ ոչ թե ջուռգլիում, այլ պարկում: Բայց սիրտս դեռ խփում էր:

Շարունակելով ճանապարհս, ես այժմ վախվիտելով էի փոխում իմ ամեն մի քայլը: Ես իզուր էի անդադար հիշեցնում ինձ, թե որտեղ եմ գտնվում: Իմ շրջապատն ստանում էր շարունակ ավելի և ավելի խորհրդավոր տեսք: Միանգամայն անսպասելի մի տեղում, խիտ մացառների միջից,

հանկարծ երևում էր մի անհասկանալի գրություն՝ «Գագոնները չտրորել»: Քիչ հետո, մի ուրիշը՝ «Ծխախոտը հատակին չգցել»:

Ես դողում էի: Զգիտեմ, եղանակն էր պատճառը, որ բավական ցուրտ էր, թե՛ իմ կուլտուրական հանգիստը: Ես այնպիսի մի կարոտ զգացի մարդկանց տեսնելու, որ որոշեցի իսկույն դուրս գալ պարկից: Բայց երբ պատկերացրի, թե ինչ վայրերով եմ վերադառնալու դեպի դռնակը, հուսահատությունը պաշարեց ինձ:

Եվ հանկարծ... Որքան շատ հանկարծակիություններով էր լի այդ պարկը... Հանկարծ իմ դիմաց տեսա քաղաքի փողոցներից մեկը... Սրտապատառ ուրախությամբ ես նետվեցի դեպի այն: Բայց իմ և փողոցի միջև կանգնած էր տախտակե ոչ շատ բարձր ցանկապատը: Որպես ջունգլիի իսկական բնակիչ, ես ուրախության վայրենի աղաղակներով դուրս ցատկեցի վերջին մացառների միջից և մագլցելով ցանկապատի վրա, ինձ գցեցի այն կողմ:

Ես հագիվ էի ինձ զգացել մայթի վրա և պատրաստվել կատարելու իմ առաջին քայլը, երբ մեկը շրմփացրեց վզակոթիս ու մեջքիս: Մի՞թե միլիցիոները՝ կարգը խանգարելուս համար: Ոչ, դա անձրևն էր, որ կարծես ինձ էր սպասում անհամբերությամբ և ահա թափվեց միանգամից և հորդառատ:

Այդպիսի անձրև ես դեռ չէի տեսել կյանքում: Դա բաղկացած էր ոչ թե կաթիլներից, այլ լիտրերից: Ջրի այդպիսի անտնտեսարար շայլման համար կարելի էր դատի տալ երկնքի կառավարչին: Մի րոպեում ես վերածվեցի մեղուգայի, որի օրգանիզմի մեջ պինդ կյուբերը կազմում են ողորմելի տոկոս: Գլխապատառ վազելով այդ փողոցով, որպես ջրագունդ, ես տեղ էի փնտրում՝ պատսպարվելու համար: Բայց տեղ չկար: Փողոցի մի թևի վրա հանգստի և կուլտուրայի պարկի ցանկապատն էր, մյուս թևի վրա՝ գազանանոցի տերիտորիայի ցանկապատը: Հարկավոր էր հասնել փողոցի անկյունին, մտնել որևէ տուն...

Եվ հանկարծ ես կանգ առա միանգամից: Տեղատարափ անձրևի տակ, հանգիստ քայլերով, դիմացից գալիս էր մի աղջիկ: Շրջապատի գորշության մեջ սքանչելի փայլում էր նրա վարդագույն-թափանցիկ անձրևանոցը՝ կնգուղը բարձրացրած: Անձրևի հեղեղները հոսում էին նրա կնգուղով, ուսերով, ծլլալով վար էին թափվում նրա փեշերից, իսկ նա, անձրևանոցի ապահով պաշտպանության տակ, միանգամայն չոր, գալիս էր և գալիս...

Մի վայրկյանում ես սիրահարվեցի նրա վրա: Նա սքանչելի էր այդ կնգուղի տակ, այդ վարդագույն անձրևանոցն ուսերին: Նրա խոպոպներից մեկը մի քիչ դուրս էր պոծել կնգուղի տակից և թրջվելով, ոչ թե բացվել էր, այլ ավելի կռիճացել:

Աղջիկը մոտեցավ ինձ, մի սքանչելի անտարբեր հայացք նետեց իրենով հիացած ջրամարդու վրա և անցավ: Ես շուռ եկա և մոռանալով անձրևը, մոռանալով ամբողջ աշխարհը, քայլեցի նրա ետևից... Աշխարհասասան շրիկոցով ճայթեց որոտը, կայծակը կարծես անցավ իմ և աղջկա մեջտեղով, բայց ոչ մի ուժ այլևս չէր կարող ետ դարձնել ինձ: Ես գնում էի նրա ետևից՝ որպես ջրի սյուն, որպես շատրվան, որը սակայն ոչ թե վեր է շարտում իր ջրերը, այլ վար: Ես դողում էի, իմ այտերը երևի գունատվել էին ցրտից և կարմրել հուզմունքից, իմ ոտքերը ճեղքում էին գետնի վրայով հոսող բավական խոր գետի հորձանքները, բայց աղջիկը չգիտեր, որ հետևում են իրեն: Նա շարունակում էր քայլել դանդաղ, ոչ թե քայլել, այլ զբոսնել: Ի՞նչ կազմվածք, ի՞նչ քայլվածք... Ինչպիսի՞ նազանքով էր նա շրմփացնում իր տուֆլիները ջրի մեջ: Ծիշտ է, նրա ոտքերը, մինչև գուլպաների կեսը, նույնպես թրջված էին, ինչպես ես ամբողջովին, բայց ի՞նչ նշանակություն ունի դա, երբ դու ամբողջովին գտնվում ես անձրևանոցի հիանալի պաշտպանության տակ: Նույնիսկ անհավատալի էր, որ այդպիսի բարակ և թափանցիկ կյուբը, որի տակից երևում էր աղջկա քառակուսիավոր հագուստը, կարող էր այդպես անջատել մարդուն ջրից և ջուրը՝ մարդուց...

Ես սայթաքեցի և ընկա մեջքիս վրա: Ջուրը գետնի վրա համեմատաբար տաք էր, և ես մի պահ հաճույքով պառկեցի այնտեղ: Բայց իմ երեսը նույնպես գտնվում էր ջրի տակ, ես խեղդվում էի, ուստի և շտապեցի ցատկել ոտքի:

Աղջիկն այլևս չկար...

Ես սլացա փողոցով, հասա անկյունին, նայեցի աջ, ձախ: Ոչ, նա անհետացել էր...

Ես վազեցի՝ այլևս առանց ծրագրի, բազմաթիվ փողոցներով, բայց այլևս չտեսա նրան: Անձրևը, ինչպես սկսվել էր հանկարծ, այնպես էլ կտրվեց հանկարծ: Երկինքն այլևս չոր էր: Միակ առարկան, որից դեռ մի կես ժամ հորդում էր ջուրը՝ դա ես էի: Բայց շուտով հայտնվեց պայծառ և բավական տաք արևը, որից հետո ջրի մնացյալ պաշարն ինձանից սկսեց դուրս գալ գոլորշու ձևով: Շրջապատված իմ սեփական ամպերով, ես ձեռնունայն բռնեցի ավանի ճանապարհը: Զաղաքի և ավանի միջև բարեբախտաբար այլևս ցեխ չկար, այնտեղ ծփում էր լիճը:

Ես լողալ գիտեի:

### 3

Այդ նշանավոր օրվանից հետո մի ամբողջ շաբաթ արևոտ եղանակ էր: Օգտվելով դրանից, ես առավոտից երեկո զբոսնում էի քաղաքում, ավելի ճիշտ՝ ոչ թե զբոսնում, այլ թափառում՝ փնտրելով այն աղջկան, որի վրա սիրահարվել էի:

Բայց նա չկար... Փոքրիկ քաղաքի բնակիչներից շատերի դեմքերը տպավորվել էին իմ մեջ, ես նրանց տեսնում էի համարյա ամեն օր, իսկ երբեմն նաև՝ օրական մի քանի անգամ, բայց իմ աղջիկն անհետացել էր...

Ենթադրելով, թե նա սովորում է կամ աշխատում, ես նրան փնտրում էի վաղ առավոտյան, երբ մարդիկ դեռ նոր էին գնում դպրոցներ ու հիմնարկներ, ես նրան փնտրում էի երեկոյան կողմ, երբ նրանք վերադառնում էին տուն:

Ոչինչ չէր օգնում: Աղջիկը չկար:

Իմ տանտերերը, տեսնելով թե ինչպիսի մեծ հետաքրքրություն եմ ցուցաբերում ես իրենց քաղաքի նկատմամբ, շատ գոհ էին, որ չեն խաբել իմ հույսերը: Բայց շուտով նրանք նկատեցին իմ մտահոգությունը և սկսեցին զանազան հարցերով նեղել ինձ: Սկզբում ես խուսափում էի պատասխանելուց, բայց հետո մտածեցի՝ իսկ ի՞նչ կլինի, եթե անկեղծորեն խոստովանեմ և դիմեմ նրանց օգնությանը: Զաղաքը փոքրիկ է, գուցե նրանք ճանաչում են իմ աղջկան:

Մի անգամ, երեկոյան, թեյասեղանի շուրջը, ես հարցրի ընկերոջս՝ բռնելով ըստ հնարավորի անտարբեր տոն.

— Լսի՛ր, մի անգամ ես ինչ-որ աղջկա տեսա քաղաքում, և նա իմ մեջ մի տեսակ հետաքրքրություն և առաջացրեց: Չետո այդ հետաքրքրությունն անցավ և ես նույնիսկ մոռացել եմ հարցնել ձեզ նրա մասին: Չե՞նց նոր հիշեցի...

— Ի՞նչ աղջիկ,— ժպտաց ընկերոջս կինը:

— Ինչպե՞ս ասեմ,— ձեռքս անորոշաբար շարժեցի ես:— Չի կարելի ասել, թե տգեղ, իհարկե:

— Այդպես ճանաչել չի կարելի,— ասաց ընկերոջս կինը,— գոնե նկարագրեցե՞ք, թե ինչ հագուստով էր նա:

— Հագուստը չտեսա,— ասացի ես:— Նա անձրևանոցով էր:

— Անձրևանոցով... Վարդագույն...

— Այո: Հիմա հիշեցի, դրա տակից թափանցում էր քառակուսիավոր հագուստ:

— Անձրևի դուստրն է,— միանգամից բացականչեցին ամուսինները:

— Ո՞վ, ո՞վ...

Փոխանակ ինձ պատասխանելու, նրանք նայեցին իրար և ծիծաղեցին: Ապա ընկերս խփեց ուսիս.

— Դե, էլ անտարբեր մի ձևանա, խոստովանիր, որ սիրահարվել ես: Նրա վրա շատերն են սիրահարվում:

— Բայց ես նրան միայն մի անգամ եմ տեսել,— փորձեցի պաշտպանվել ես:— Ինչպե՞ս կարելի է միանգամից...

— Դու շատ լավ գիտես, որ կարելի է:

— Իհարկե, կարելի է,— հաստատեց կինը:

— Գուցե,— ստիպվեցի համաձայնել ես:— Ես դեռ հաշիվ չեմ տվել ինձ: Ուրեմն դուք ճանաչո՞ւմ եք նրան...

— Ոչ բոլորովին,— խոստովանեց կինը:— Եթե նա ավանում ապրեր՝ ուրիշ բան: Բայց նա քաղաքումն է ապրում:

— Իսկ անո՞ւնը... Իսկ որտե՞ղ է ապրում... Կամ սովորում... Կամ աշխատում...

— Ոչինչ չգիտեմ,— նորից խոստովանեց կինը:— Ավանի բոլոր բնակիչներս նրան ճանաչում ենք որպես Անձրևի դուստր: Ինչո՞ւ: Որովիետև նրան կարելի է տեսնել միմիայն անձրև օրերին: Նա գիտե, որ անձրևանոցը նրան շատ է սագում և դրա համար փողոց է դուրս գալիս միմիայն այդ ժամանակ: Ոչ ոքի դեռ չի հաջողվել տեսնել նրան արևի տակ...

— Այնպես որ,— ծիծաղելով ինձ վրա, նորից ուսիս խփեց ընկերս,— եթե ուզում ես տեսնել նրան՝ պիտի թրջվես...

— Չէ՛ մի, թրջվել, և այն էլ ո՞ւմ համար...— արհամարհանքով ասացի ես:

Ամուսինները, իհարկե, չհավատացին ինձ:

#### 4

Այդ օրվանից իմ կյանքն այդ քաղաքում վերածվեց անձրևի սպասման: Ոչ մի տոչորված հող այնպես չի սպասում ոռոգման, ոչ մի ագռավ այնպես չի սպասում ձյան, ինչպես ես էի սպասում անձրևի: Ես անիծում էի լավ եղանակները, ես բարկությամբ էի նայում կապույտ երկնքին: Ինչո՞ւ էին բոլոր մարդիկ այդքան զվարթ, ի՞նչ էին գտել արևի մեջ: Ես միակ մռայլն էի: Ինձ կարող էր ուրախացնել միմիայն մռայլ եղանակը:

Ամեն անգամ ավանից քաղաք գնալիս ես ափսոսանքով էի տեսնում, որ այլևս ցեխ չկա և հույս էլ չկա, թե շուտով լինի: Ճիշտ է, այժմ արդեն ավտոբուսներ էին երթևեկում ավանի և քաղաքի միջև, նույնիսկ սկսել էին ճանապարհի կառուցման աշխատանքներ, այդ բոլորն ուրախալի էր, բայց ի՞նչ նշանակություն ուներ ինձ համար: Իմ սիրո համար հարկավոր էր ցեխ, անձրև, կայծակ, որոտ, փողոցներով հոսող ջուր...

Մի քանի անգամ այդ շաբաթվա ընթացքում հայտնվեցին ամպեր, բայց դրանք հայտնվեցին քաղաքից տասնյակ կիլոմետր այն կողմ և գնացին իրենց ճանապարհով: Երբեմն ես նույնիսկ լսում էի ամպերի գոռոցը և ամբողջ հոգով նախանձում այն մարդկանց, որոնք հիմա թրջվում էին դրա տակ:

Ամեն երեկո ես ազահոությամբ էի լսում ռադիոյով հաջորդ օրվա եղանակի կանխատեսությունը: Բայց անձրև չէր սպասվում, որովիետև ամեն անգամ եղանակների բյուրոն անձրև էր խոստանում: Ի՞նչ կլիներ, որ գոնե մի անգամ լսեի պայծառ եղանակի խոստում...

Բայց վերջապես երկինքը գթաց ինձ: Իմ տանտերերն արդեն վերադարձել էին աշխատանքից, և մենք նստել էինք ընթրիքի, երբ շումփաց անձրևը: Գդալը նետելով վար, ես դուրս ցատկեցի բնակարանից: Թող մտածեն իմ մասին ինչ որ ուզում են: Այո, ես սիրում եմ Անձրևի դստերը...

Նետվելով փողոց, առանց ուշադրություն դարձնելու ցրտին, չսպասելով ավտոբուսի, ես վազ տվեցի դեպի քաղաք: Անձրևը թափվում էր մթնոլորտի մեջ՝ առանց շիթերի, առանց նույնիսկ հորձանքների, թափվում էր համատարած: Ջրի սառնությունը մի րոպեում հասավ մինչև իմ մարմինը, ասպա ոսկորները: Ինձ թվաց, թե ես հանկարծ մերկացա: Բայց ես գոհ էի, անչափ գոհ: Հուզմունքից ու ցրտից դողացող մարմնով, իրար խփվող ատամներով, ես շտապում էի գտնել Անձրևի դստերը...

հիարկե, առաջին հերթին ես վազ տվեցի դեպի գազանանոցի և հանգստի ու կուլտուրայի պարկի միջև անցնող փողոցը: Բայց ավա՛ր. . . Այդ փողոցի վրա տներ չկային, ոչ մի լապտեր չկար, և ես անկարող էի մթուղայան մեջ տեսնել նրան՝ եթե նա նույնիսկ լիներ այդտեղ: Իսկ անձրևի շրմփոցը խլացնում էր ամեն մի հնարավոր ոտնաձայն:

Ես վազ տվեցի դեպի հատող փողոցը, ապա նաև ուրիշ փողոցներ: Այժմ, սակավ լույսերի տակ, ես տեսնում էի, որ իմ շուրջը դատարկ է, ոչ մի խելագար չի շրջում անձրևի տակ: Իսկ նրանք, ովքեր հովանոցներով պաշտպանված, պետք է վազ տային թաքնվելու որևէ տեղ, վաղուց էին վազ տվել ու թաքնվել: Անձրևանոց հագած նորմալ մարդիկ նույնպես, վախենալով թրջել իրենց ոտքերը, անշուշտ պահվել էին այս ու այն կողմ՝ սպասելով անձրևի կտրվելուն: Ես գիտեի, որ միայն իմ Անձրևի դուստրն էր շրջում այդ թուփերի քաղաքով՝ արհամարհելով իր թաց տուֆլիներն ու գուլպաները: Նա շրջում էր, որովհետև անձրևանոցը սազում էր նրան, սազում էր այնպես, ինչպես ոչ ոքի...

Ես մի պահ պատկերացրի, թե ինչպես նա, գարուն, թե ամառ, ամառ թե աշուն, ամեն օր դուրս է գալիս իր տնից ծալած անձրևանոցը թևի տակ՝ դասագրքերի կամ պորտֆելի հետ, և նայելով երկնքին, անձրև է երազում: Ես պատկերացրի, թե ինչպես անձրևի առաջին իսկ վայրկյաններին նա աղաչանք-պաղատանքով թույլտվություն է ստանում իր դասախոսից կամ վարիչից և դուրս է նետվում՝ «շտապ գործով»:

Այո, այժմ նույնպես, նա դրսումն է, քաղաքի փողոցներում: Բայց որտե՞ղ գտնել նրան... Գուցե հենց այս թուփի նա անցավ հարևան աջակողմյան փողոցով: Կամ ձախակողմյան: Կամ երրորդ փողոցով: Կամ...

Երբեք իմ անձնավորության քանակն ինձ այդքան քիչ չէր թվացել, ինչպես այդ երեկո: Ախ, ինչո՞ւ ես հարյուր հատ չէի, որպեսզի անցնեի հարյուր կողմերով և գտնեի Անձրևի դստերը... Ես կգտնեի նրան, կնետվեի դեպի նա, կգրկեի, այնպես կսեղմեի իմ կրծքին, որ ամբողջ շուրջ դուրս ժայթքեր իմ Եռթյունից: Նույն թուփերն վրա կհասնեին իմ մնացյալ իննսունինը կրկնյակները, մենք խանդից կկտորրեինք իրար, կմնար մեզանից միմիայն մեկը, և Անձրևի դուստրը կպատկաներ նրան: Ինձ համար միևնույնն էր, թե մեզանից որ մեկը հաղթեր, չէ՞ որ բոլորն էլ ես էի...

Ես զգացի, որ զառանցում եմ:

## 5

Իսկական զառանցանքը, սակայն, վրա հասավ հետևյալ օրը: Ամբողջ գիշերը ես դողացել էի անկողնում, թեև իմ վերմակի վրա ամուսինները գցել էին իրենց վերարկուները՝ կնոջ աղվեսի հետ միասին: Առավոտյան, ինչպես հետո իմացա ես, նրանք վիճակ էին գցել, թե իրենցից որ մեկը չգնա աշխատանքի և խնամի ինձ: Վիճակն ընկել էր կնոջը: Նա ինձ համար եփեց հավի բուլլոն, իրենց տնային դեղատուփի կեսը դատարկեց իմ փորը, բայց ոչինչ չէր օգնում: Ես շարունակ շուր էի պահանջում, և երբ նա ինձ էր մեկնում բաժակը, ես բարկանում էի, որ դա քիչ է, որ ինձ հարկավոր է քաղաքով լի շուր, հեղեղ, ջրհեղեղ:

Երեկոյան, երբ ամուսինը եկավ տուն, ես արդեն կորցրել էի իմ գիտակցությունը: Ինչպես էին ինձ փոխադրել հիվանդանոց՝ չեմ հիշում: Քանի օր էր անցել՝ նույնպես չեմ հիշում: Երբ աչքերս բաց արեցի՝ իմ մահճակալի վրա խոնարհված տեսա երկու կնոջ գլուխ, մեկը՝ գեղեցիկ, մյուսը՝ տգեղ: Դրանցից մեկը ժպտաց ինձ ու հեռացավ, իսկ մյուսը ժպտաց և մնաց: Ես շատ կուզեմայի, որ հեռացածը տգեղը լիներ, իսկ մնացածը՝ գեղեցիկը, բայց հակառակն էր: Բժշկուհին պենիցիլինի հերթական սրսկումից հետո տեսնելով, որ ես արդեն գիտակցության եկա, գնաց, իսկ բուժքույրը մնաց ինձ խնամելու: Իմ առաջին հարցը նրան եղավ այն, թե ինչ եղանակ է դրսում:

— Արև է,— պատասխանեց նա:

— Դուք դա ըստ ռադիոյի՞ եք ասում, թե իսկական:

— Իսկական: Բայց ինչների՞դ է պետք արևը: Դուք դեռ պառկելու եք:

— Իսկ որքա՞ն ժամանակ է, որ ես այստեղ եմ,— հարցրի ես նվաղ ձայնով:

— Ձեզ այստեղ բերելուց հետո դուք ամբողջ ժամանակ այստեղ եք,— ասաց բուժքույրը հանգիստ ձայնով:

Ես տարակուսանքով նայեցի նրան: Ինչո՞ւ չի ուզում ասել, թե որքան ժամանակ եմ ես այստեղ: Բայց նրա դեմքը ոչինչ չէր արտահայտում, ուներ նույնիսկ մի փոքր հիմար տեսք, և ես չկարողացա ոչինչ հասկանալ: Բայց հանկարծ նա ինքը, մեծ ուշացումով հասկանալով իմ հարցը, բացականչեց.

— Ախ, դուք հարցնում եք, թե քանի՞ օր եք այստեղ: Ներեցեք: Չորեքշաբթի օրվանից:

— Իսկ այսօր ինչ օր է,— գայրացա ես նրա հիմարության վրա:

— Ամսի քսանչորսն է: Ներեցեք ինձ:

— Ես ներում եմ միայն քսաներեքին,— բղավեցի ես՝ ինձանից դուրս ելած և շուռ եկա դեպի պատը:

## 6

Իմ գիտակցության գալուց հետո ես դեռ էլի մի շաբաթ պառկեցի այդ հիվանդանոցում: Ավելի ձանձրալի շաբաթ ես չեմ անցկացրել իմ կյանքում: Բացառություն էին կազմում առավոտները, երբ գեղեցիկ բժշկուհին այցելում էր ինձ մի քանի թուպեով, և երեկոները, երբ տեսության էին գալիս իմ ընկերն ու իր կինը՝ բերելով միրգ ու ծաղիկներ: Մնացյալ ժամանակը ես անց էի կացնում երագելով Անձրևի դստեր մասին: Դրսում արևոտ, պայծառ օրեր էին, և ես չէի ափսոսում, որ փողոցում չեմ: Անձրևանոցով աղջիկն այստեղ չէր, ես չէի կարող տեսնել նրան...

Հիվանդասենյակում ես պառկած էի մենակ: Մնացյալ չորս մահճակալներն ազատ էին: Ամբողջ հիվանդանոցում, ըստ բուժքրոջ տվյալների, հագիվ լինելի «երեքից-տասը» հիվանդ: Ըստ երևույթին, քաղաքն ուներ խիստ առողջ բնակչություն:

Մինչև հիմա էլ չգիտեմ՝ ես զառանցանքի մեջ ոչինչ չե՞մ ասել Անձրևի դստեր մասին: Ըստ երևույթին՝ ոչ, որովհետև ոչ գեղեցիկ բժշկուհին, ոչ նույնիսկ տգեղ բուժքույրն ինձ չէին ասում այդ մասին ոչինչ և նրանց հայացքներից էլ երևում էր, որ նրանք չեն թաքցնում ինձանից որևէ բան: Բայց ինչ էլ լիներ, գիտակցության գալուց հետո ես ինձ մի տեսակ անհարմար էի զգում և նույնիսկ եղանակի մասին հարցնում էի վախ՛վխելով, որպեսզի ոչ ոք չկռահի ոչինչ: Միայն իմ ընկերս ու իր կինն էին հասկանում ինձ, բայց նրանք նույնպես խուսափում էին նուրբ հարցեր շոշափելուց:

Կարողալու տրամադրություն չունեի, իսկ ոչ ոք չկար, որ հետը խոսեր: Մյուս սենյակներում պառկած հիվանդները համարյա դուրս չէին գալիս այնտեղից, ես նույնպես քիչ էի լինում միջանցքում: Մտում էր բուժքույրը, որն ինձ մոտ լինում էր շատ սակավ, իսկ ես կուրախանայի, որ բոլորովին էլ չլիներ: Բայց վերջապես մի օր, ձանձրույթից դրդված, ես ինքս խոսեցի նրա հետ.

— Ձեր բժշկուհին... ամուսնացա՞ծ է:

— Ոչ,— ասաց նա:— Դեռ չի ամուսնացել, դրա համար էլ ամուսնացած չէ:

— Ասացեք, բուժքույր, նա... նա սիրո՞ւմ է արև:

— Չեմ հարցրել, հիվանդ, բայց կարծեմ սիրում է:

— Իսկ... անձրև՞:

— Չի սիրում,— վճռաբար հայտարարեց բուժքույրը:

— Լա՛վ գիտեք:

— Այո: Անձրևի ժամանակ նա միշտ գրգռված է լինում և բարկացած է խոսում ինձ հետ:

Ես հուսախաբված լռեցի:

— Պատմեցեք ինձ որևէ բան — խնդրեցի քիչ հետո բուժքրոջը:

— Ի՞նչ բան:

— Միևնույնն է,— թափ տվեցի ես ձեռքս:

Բուժքույրը մի պահ լռեց և ասաց.

— Այդ մահճակալի վրա, որտեղ դուք եք պառկած, անցյալ տարի մի մարդ մեռավ:

Ես սարսափած վեր ցատկեցի տեղիցս:

— Պառկեցեք, հիվանդ,— հանգստացրեց ինձ այդ հիմար բուժքույրը,— Նա մեռավ հարբեցողությունից, իսկ ձերը թոքային բորբոքում է: Դրանից հիմա համարյա չեն մեռնում:

— Քնել եմ ուզում,— ասացի ես կոպտաբար՝ շուռ գալով դեպի պատը:

— Նա էլ ցերեկները միշտ քնում էր,— ասաց բուժքույրը, ապա, նորից հանգստացնելու համար ինձ, ավելացրեց.— բայց նա գառամյալ ծերունի էր և իհարկե ձեզանից տարիքով մեծ էր:

Ես խռիռացրի, իբր թե արդեն քնել եմ:

— Նա էլ էր խռիռացնում,— ասաց բուժքույրը:— Մանավանդ՝ վերջին անգամ:

Եվ դուրս ելավ:

## 7

Հիվանդանոցից դուրս գրվելիս ես մի տեղեկանք վերցրի այնտեղից իմ հիվանդության մասին, որովհետև արձակուրդս արդեն վերջացել էր, և ես երեք օրով ուշացել էի իմ աշխատանքից: Մինչդեռ գեղեցիկ բժշկուհին տեղեկանքն էր գրում, ես նայում էի շուրջս՝ փնտրելով, թե չե՞մ տեսնի արդյոք նրա կաբինետում վարդագույն անձրևանոցը: Որքա՞ն մեծ երջանկություն կլինեք, եթե դուրս գար, որ նա էր Անձրևի դուստրը: Բայց անձրևանոցը, իհարկե, չկար, և ես մտքումս հեզվեցի ինձ իմ հիմար հույսի համար:

Հրաժեշտ տալով հիվանդանոցի մյուս աշխատողներին, ես դուրս ելա: Վերջին րոպեին բուժքույրն ասաց ինձ.

— Տեսնո՞ւմ եք, որ չմեռաք: Դուք հետո կմեռնեք: Գնաք բարով:

Ընկերս ու իր կինն ինձ սպասում էին մուտքի մոտ: Որքա՞ն նեղություն պատճառեցի ես նրանց: Մենք երեքով գնացինք տուն, վերցրինք իմ ճամպուրկը և եկանք կայարան: Օրը նորից թխապոտ էր, ուր որ է՝ անձրև էր գալու: Ընկերս խուսափում էր երկնքին նայելուց և իմ փոխարեն ինքն էր անհարմար զգում իրեն: Իսկ նրա կինը, տեսնելով, որ ես նորից ողջ-առողջ եմ և այժմ արդեն կարելի է ինձ ծաղրել, շուտ-շուտ նայում էր ամպերին և ասում.

— Օ՛յ, շուտով անձրև է գալու: Գուցե կհետաձգե՞ք ձեր մեկնելը...

Իսկ երբ ես բարձրացա վագոն, և գնացքը շարժվեց, նա ձայն տվեց ինձ.

— Ես ձեզ նամակ կգրեմ այստեղի եղանակների մասին. . .

Նա իր խոստումը պահեց: Մի քանի օր ստացա նրանից: Նա ինձ հայտնում էր, որ արդեն պարզել է Անձրևի դստեր ով լինելը: Անձրևի դուստրը՝ դա հիվանդանոցի տգեղ բուժքույրն է... Նա հիմա էլ, ըստ իր սովորության, անձրևի ժամանակ թույլտվություն է ինդրում գեղեցիկ բժշկուհուց՝ դուրս գալու «կարևոր գործով», և բժշկուհին ամեն անգամ գրգռվում է և բարկանում նրա վրա:

Զմոռանամ ասել, որ ես այժմ ամուսնացած եմ: Իմ կնոջ վրա ես սիրահարվեցի մի չոր, արևոտ օր: